ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԿՄՀԲ-ԳՀԱՇՁԲ-22/28»

ք.Հրազդան «10» **օգոստոս 2022թ.**

Հրազդանի համայնքապետրանն ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Գլավդորստրոյ» ԲԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ս. Պողոսյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<<Հրազդան համայնքի Մաքրավան թաղամասում ավտոտեխսպասարկման կայանատեղիի և ծածկարանի կառուցման>> աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100/մեկ հարյուր/տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար

հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **39 750 000 /երեսունինը միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի

հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասի իրականացումը կատարվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հրազդանի համայնքապետարան	«Գլավդորստրոյ»ԲԸ
ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,	ՌԴ , ք. Մոսկվա, Վերնայա փողոց, շենք 1/4
վարչական շենք	«ՎՏԲ Հայաստան» Բանկ ՓԲԸ, Չարենցավան մ/ճ
Հրազդանի ՏԳԲ	ՀՀ 16028028445800
Հ/Հ 900122001465	ՀՎՀՀ 7729511888
ՀՎՀՀ 03027114	Տնօրեն՝
Համայնքի ղեկավար՝	
---------- Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	---------- Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇԱՎԱԼՆԵՐԸ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
	1-1. Քանդման աշխատանքներ				
1	Գ/ունեցող շենքի ապամոնտաժում 24x8 չափերի	$մ^3$	211.7	1.759	372.453
2	Գ/ունեցող շենքի բետոնե սյունների ու հեծանների քանդում	$մ^3$	12.52	20.670	258.784
3	Գ/ունեցող շենքի ծածկի պանելների ապամոնտաժում	$մ^3$	51.8	21.965	1137.812
4	Տարածքի համահարթեցում	$մ^3$	75.25	1.601	120.499
5	Շին.աղբի բարձում	$մ^3$	60.0	0.548	32.869
6	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	120.0	1.264	151.704
	Ամբողջը 1-1 մասի				2074.122
	1-2. Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Կոնստրուկտորական մաս				
1	Նախապատրաստական շերտի իրականացում հիմքերի տակ B10 դասի բետոնով	$մ^3$	3.9	32.460	126.595
2	Խամքարաբետոնե հիմքերի կառուցում B7,5 դասի բետոնով	$մ^3$	62.05	33.918	2104.598
3	Միաձույլ ե/բետոնե հակասեյսմիկ գոտու կաուցում B 15 դասի բետոնով	$մ^3$	8.86	65.318	578.719
4	Φ16AIII դասի ամրան	տ	0.70	357.064	249.945
5	Φ8AIII դասի ամրան	տ	0.407	609.725	248.158
6	Մետաղական ցանցի Ց-1 (Φ6A240) տեղադրում միջնորմների ամրակապման համար	տ	0.16	549.839	85.445
7	Միաձույլ ե/բետոնե սյուների կառուցում B15 դասի բետոնով	$մ^3$	9.12	83.205	758.825
8	Φ22AIII դասի ամրան	տ	0.901	357.064	321.768
9	Φ16AIII դասի ամրան	տ	0.478	489.555	233.910
10	Φ8AIII դասի ամրան	տ	0.396	609.725	241.634
11	Միաձույլ ե/բետոնե հեծանների կառուցում B15 դասի բետոնով	$մ^3$	26.6	74.924	1992.225
12	Φ16AIII դասի ամրան	տ	1.514	356.932	540.309
13	Φ12AIII դասի ամրան	տ	0.425	356.932	151.824
14	Φ8AIII դասի ամրան	տ	0.598	609.725	364.481
	Ճարտարապետական մաս				0.000
1	Պատերի կառուցում 40սմ հաստ. կանոնավոր տուֆ քարերով 502,1m2	$մ^3$	200.1	26.829	5368.045
2	Պատերի ցեմ/ավազային լավորակ սվաղ	$մ^2$	655.4	2.385	1562.931
3	Պատերի սվաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով՝ լավորակ	$մ^2$	655.4	1.060	694.636
	Մետաղական ֆերմա			0.000	0.000
1	Մետաղական ֆերմաների և ծպեղների պատրաստում և տեղադրում	տ	3.76	776.982	2923.395
2	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ ներկում հակակորոզիոն ներկով	$մ^2$	100.0	0.835	83.470
	Տանիք				0.000
1	Տանիքածածկ Մետաղակղմինդրից "Կլասիկ" d=0.5մմ	$մ^2$	298.7	10.467	3126.228
2	Ջրհորդան L=6,4մ	կ-տ	5.0	25.041	125.204
3	Կախովի ճոռ δ= 0,5մմ	գ.մ	25.0	4.902	122.554

4	Կախովի ճոռի ամրացում մետաղական տարրերով	տ	0.02	638.370	12.767
5	Թասակի տեղադրում 0,5մ լայնքով 49,2մ	մ^2	24.6	8.400	206.639
	Պատուհաններ				
1	Մետաղապլաստե պատուհաններ,ապակեփաթեթը երկշերտ, պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 4,պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ,գույնը սպիտակ, (արտերկիր) կոնստրուկցիան բացվող	մ^2	6.40	37.363	239.120
	Դռներ				0.000
1	Մետաղական փոշեներկված դռների տեղադրում	մ^2	61.0	36.634	2234.665
	Հատակներ			0.000	0.000
1	Ավազակոպճային նախապատրաստական շերտ	մ^3	28.0	5.035	140.971
2	Ե/բետոնե շերտի իրականացում B15 դասի բետոնով	մ^3	28.00	40.145	1124.056
3	Ամրան Φ10AIII	տ	3.61	356.932	1289.237
	Արտաքին հարդարման աշխատանքներ				
1	Պատուհանագոգերի տեղադրում 300x30մմ կտրվածքով մետաղական թիթեղով 8,3մ	մ^2	2.5	5.220	12.998
2	Շեպերի (20սմ լայնքով) բարձրորակ ցեմենտ/ավազային սվաղ	մ	137.6	1.073	147.670
3	Պատերի սվաղում ցեմ.ավազային շաղախով	մ^2	332.5	2.650	881.067
4	Այնուհետև ամբողջությամբ ծեփամածկել և ներկել ճակատային ներկով	մ^2	332.5	3.445	1145.387
	Սալվածք			0.000	0.000
3	Բետոն B15 դասի	մ^3	3.22	38.687	124.574
4	Խճի նախապատրաստական շերտ	մ^2	1.81	5.485	9.928
	Ամբողջը 1-2 մասի				29573.981
	1-3. էլեկտրական լուսավորություն				
1	էլ. բաշխիչ վահանակ 36 մոդուլ	հատ	1	34.381	34.381
2	Ավտոմատ անջատիչ միաբևեռ Iտա=10 Ա	հատ	2	3.511	7.022
3	Ավտոմատ անջատիչ միաբևեռ Iտա=16 Ա	հատ	6	3.511	21.066
4	Ավտոմատ անջատիչ միաբևեռ Iտա=25 Ա	հատ	10	3.445	34.448
5	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ Iտա=16 Ա	հատ	4	4.929	19.715
6	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ Iտա=32 Ա	հատ	1	4.929	4.929
7	Ցանցային մալուխատար 50մմ	մ	24.0	3.180	76.315
8	Գործարանային ամրակ և հենակ	հատ	16	0.397	6.360
9	Հեղույս, մանեկ և երկու տափօղակ հիմնական մալուխատարի համար	հատ	35	0.265	9.274
10	20մմ, 40մմ մետաղյա հենակ	մ	3.0	3.842	11.527
11	8մմ, 10մմ պարուրաձև միջուկ 2մ	հատ	10	2.451	24.511
12	8մմ, 10մմ հեղույս, դուբել	հատ	40	0.053	2.120
13	Մեկուսիչ ժապավեն	հատ	20	0.172	3.445
14	20մմ PVC ճկախողովակ	մ	250.0	0.397	99.368
15	20մմ PVC ճկախողովակի ամրակ	հատ	150.0	0.013	1.987
16	80x80x75մմ ՊՎՔ խողովակի միացման տուփ	հատ	30	0.146	4.372
17	160x110x75մմ ՊՎՔ խողովակի միացման տուփ	հատ	10	0.146	1.457
18	Հողանցման թիթեղ 20x5x100	հատ	1	7.155	7.155
19	Հողանցման ցինկապատ պողպատե միաձույլ հաղորդաթիթեղ 40x4մմ	մ	10.0	1.206	12.057

20	Φ16մմ 3000մմ հողանցման ցինկապատ էլեկտրոդ 5 հատ	մ	15.0	0.596	8.943
21	Մալուխ PVC մեկուսացումով, հատվածքը 3x1,5մմ² BBG LS, չայրվող կամ քիչ ծխացող	մ	250.0	0.464	115.930
22	Մալուխ PVC մեկուսացումով, հատվածքը 3x2,5մմ² BBG LS, չայրվող կամ քիչ ծխացող	մ	200.0	0.662	132.491
23	Մալուխ PVC մեկուսացումով, հատվածքը 5x2,5մմ² BBG LS, չայրվող կամ քիչ ծխացող	մ	140.0	0.994	139.116
24	Մալուխ PVC մեկուսացումով, հատվածքը 3x4մմ² BBG LS, չայրվող կամ քիչ ծխացող	մ	220.0	0.927	204.037
25	Միդիրքային ՊՎՔ գերմանական տիպի տուփ (1x2մոդուլ)	հատ	24	0.172	4.134
26	Եռդիրքային ՊՎՔ գերմանական տիպի տուփ (3x2մոդուլ)	հատ	6	0.662	3.975
27	Միդիրքային ՊՎՔ դիմային շրջանակ և ներդիր (անջատիչների և վարդակների համար)	հատ	24	0.146	3.498
28	Եռդիրքային ՊՎՔ դիմային շրջանակ և ներդիր (անջատիչների և վարդակների համար)	հատ	6	0.397	2.385
29	16Ա բաժանիչ տուփով միդիրքային վարդակ գերմանական տիպի	լրակ	24	1.868	44.835
30	16Ա բաժանիչ տուփով միդիրքային անջատիչ	հատ	18	1.272	22.895
31	16Ա բաժանիչ տուփով միդիրքային վարդակ	լրակ	4	1.868	7.473
32	A-22 տիպի արտաքին լուսավորության սարք IP45	հատ	4	25.107	100.428
33	B-4 1200x80մմ տիպի լուսավորության սարք 4000 Կ, 40Ա, IP44	հատ	32	9.539	305.260
	Ամբողջը 1-3 մասի				
	Ընդամենը 1-1 1-3 մասերի				1476.9
	ԱԱՀ - 20 %				33125.0
	Ամբողջը ներառյալ ԱԱՀ				6625.0
	*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ Չնախատեսված ծախսերը՝ 1.5%, Շահույթը՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%				39750.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,

վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001465

ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար՝

----------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գլավդորստրոյ»ԲԸ

ՌԴ , ք. Մոսկվա, Վերնայա փողոց, շենք 1/4

"ՎՏԲ Հայաստան» Բանկ ՓԲԸ, Չարենցավան մ/ճ

ՀՀ 16028028445800

ՀՎՀՀ 7729511888

Տնօրեն՝

_____Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ

Հավելված թիվ 2

«10» օգոստոս. կնքված

<<ԿՄՀՔ-ՀԳՀԱՇՁԲ-22/28>> ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**<<Հրազդան համայնքի Մաքրավան թաղամասում ավտոտեխսպասարկման կայանատեղիի և ծածկարանի կառուցման աշխատանքներ>>**	Մի մասը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդող աշխատանքային օրից , մյուս մասը՝ Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ Կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու հաջորդող աշխատանքային օրից:	Կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացույցային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1,

վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001465

ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար՝

_____Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գլավդորստրոյ»ԲԸ

ՌԴ , ք. Մոսկվա, Վերնայա փողոց, շենք 1/4

«ՎՏԲ Հայաստան» Բանկ ՓԲԸ, Չարենցավան մ/ճ

ՀՀ 16028028445800

ՀՎՀՀ 7729511888

Տնօրեն

_____Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ

Հավելված N 3

«10» օգոստոս 2022թ.կնքված

«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-22/28» *ծածկագրով պայմանագրի*

չ/հ	գնումների պլանով (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221145	<<Հրազդան համայնքի Մաքրավան թաղամասում ավտոտեխսպասարկման կայանատեղիի և ծածկարանի կառուցման աշխատանքներ>>	Համայնքի մասնաբաժին									15 837 500	25 837 500	25 837 500	25 837 500
			Պետության մասնաբաժին /սուբվենցիա/							ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու հաջորդող օրվանից՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ:					

Պատվիրատու

Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001465

ՀՎՀՀ 03027114

Համայնքի ղեկավար՝

Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գլավդորստրոյ»ԲԸ

ՌԴ , ք. Մոսկվա, Վերենայա փողոց, շենք 1/4

"ՎՏԲ Հայաստան» Բանկ ՓԲԸ, Չարենցավան մ/ճ

ՀՀ 16028028445800

ՀՎՀՀ 7729511888

Տնօրեն՝

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ